

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԸ

Գ. Բ. Ղարիբջանյան

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԺՆԵՎՈՒՄ

Աշխարհի և ոչ մի ծայրամասում չկա մի անկյուն, որտեղ չիմանան Վ. Ի. Լենինի մեծ անունը։ Նրա ամբողջ կյանքը նվիրված էր աշխատավորությանը ամեն տեսակի ճնշումից ազատագրելու գործին, սոցիալիզմի և կոմունիզմի համար մղվող պայքարի գործին։

Նախահեղափոխական տարիներին Վ. Ի. Լենինը դաժանորեն հետապնդվելով ցարական իշխանությունների կողմից, բազմիցս ձերբակալվելով, բանտարկվելով և աքսորվելով, ստիպված է եղել երկար տարիներ անցկացնել վտարանդիության մեջ արտասահմանի տարբեր երկրներում։ Մոտ տասնվեց տարի, սկսած 19-րդ դարի վերջերից մինչև 1917 թ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում, Լենինը գործել է Եվրոպայի բազմաթիվ վայրերում։ «Անիծյալ հեռվից», ինչպես Վ. Ի. Լենինն էր անվանում էմիգրացիան, նա ղեկավարել է երկրում ծավալվող հեղափոխական-կուսակցական աշխատանքները։ Դտնվելով արտասահմանում, Լենինը միշտ սերտ կապեր ուներ Ռուսաստանի հետ և ավելի քան որևէ մեկ ուրիշը, քաջատեղյակ էր կազմակերպությունների անմիջական գործերին, գլխավորում և ուղղություն էր տալիս նրանց աշխատանքներին։

Այս հոդվածի նպատակն է Վ. Ի. Լենինի աշխատությունների, նրա մասին հիշողությունների, ինչպես նաև սույն ուսումնասիրության հեղինակի Շվեյցարիայում եղած ժամանակ անձնական դիտողությունների հիման վրա համառոտակի ցույց տալ Վ. Ի. Լենինի վիթխարի գործունեությունը Ժնևում՝ էմիգրացիայի տարիներին, նրա հանդիպումները կովկասցի իր աշակերտների ու զինակիցների հետ։

* * *

1895 թ. մինչև 1917 թ. ընդմիջումներով, ընդհանուր առմամբ 4 տարի, Լենինը ապրել և գործել է Ժնևում, որը նախահեղափոխական տարիներին քաղաքական էմիգրացիայի խոշոր կենտրոններից էր։ Այնտեղ էր գտնվում կուսակցության Կենտրոնական կոմիտեն, կուսակցական մի շարք հրատարակչություններ։ Այնտեղ Լենինը գրել և հրատարակել է բազմաթիվ գրքեր, բրոշյուրներ, հոդվածներ, կարդացել է դասախոսություններ, զեկուցումներ, ռեֆերատներ, ղեկավարել է հին «Իսկրան», «Վպերյոդ», «Պրոլետարի», «Սոցիալ-դեմոկրատ» թերթերը, հանդիպումներ է ունեցել կուսակցության մի շարք գործիչների հետ, որոնք լենինյան լիցքավորումով վերադառնալով Ռուսաստան, հերոսաբար կենսագործում էին կուսակցության ցուցումները։

Վ. Ի. Լենինը առաջին անգամ Ժնև է մեկնել 1895 թ. գարնանը։ Մինչ այդ նա լավ ուսումնասիրել էր Շվեյցարիան, գիտեր 1883 թ. Ժնևում հիմնադրված Ռուսաստանի առաջին մարքսիստական «Աշխատանքի ազատագրություն»

խմբի, նրա հիմնադիրներ Գ. Վ. Պլեխանովի, Պ. Բ. Աքսելրոդի, Վերա Զասուլիչի մասին։ Նրանց հետ հանդիպելու և արևմտաեվրոպական բանվորական շարժմանը ծանոթանալու համար Լենինը մեկնում է արտասահման։ 1895 թ. մայիսին Ժնևում, Կանդոլ փողոցում, Լենինը հանդիպում է Պլեխանովին, զրուցում նրա հետ։ Նույն ամսին նա լինում է Ցյուրիխում՝ Աքսելրոդի մոտ։ Այդ հանդիպումներից հետո և՛ Պլեխանովը, և՛ Աքսելրոդը նշում էին Լենինի զարմանալի հեղափոխական եռանդը։ Քսանհինգամյա Վլադիմիր Ուլյանովը այդ ժամանակ արդեն ճանաչված հեղափոխական էր և գտնվում էր ցարական իշխանությունների խիստ հսկողության տակ, որոնք նրան համարում էին «ամենախոշոր դեմքը հեղափոխության մեջ»։

Ժնև և Ցյուրիխ կատարած իր այս առաջին այցելությունից հետո Լենինը հաճախակի ընտրում է Շվեյցարիան որպես իր էմիգրացիայի վայր։ Եվ դա պատահական չէր։ Գտնվելով Եվրոպայի կենտրոնում, բազմալեզու այդ երկիրը 16-րդ դարից սկսած, բազմաթիվ ու բազմատեսակ վտարանդիների ապաստանն էր։ Շվեյցարիան ուներ չեզոք պետության ստատուտ։ Այնտեղ կարելի էր տեսնել գրեթե բոլոր եվրոպական ազգերի ու ժողովուրդների ներկայացուցիչների՝ քաղաքական ու կրոնական տարբեր ուղղություններով ու համոզմունքներով։

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Շվեյցարիայի մի շարք քաղաքներում ապրում էին բազմաթիվ ռուսներ և ուրիշ ժողովուրդների՝ լեհերի, հայերի, վրացիների, հրեաների ներկայացուցիչներ։ Ժնևի, Ցյուրիխի, Բեռնի և այլ քաղաքների համալսարանները, գրադարանները, տպագրական հնարավորությունները գրավում էին շատ գրական, երաժշտական, գիտական ու քաղաքական գործիչների։

«Իմ բոլոր շրջած վայրերից, — գրել է Վ. Ի. Լենինը 1914 թ., — ես կընտրեի Լոնդոնը կամ Ժնևը, եթե դրանք երկուսն էլ այնքան հեռու չլինեին։ Ժնևն առանձնապես լավ է ընդհանուր կուլտուրականությամբ և կյանքի համար չափազանց հարմար լինելու տեսակետից»[1]։

1900 թ. օգոստոսին Լենինը կրկին մեկնում է Շվեյցարիա։ Նա լինում է Ցյուրիխում, զրուցում Աքսելրոդի հետ «Իսկրայի» և «Զարյայի» հրատարակության մասին, ապա գնում Ժնև՝ այդ հարցերի կապակցությամբ բանակցություններ վարելու Պլեխանովի հետ։ Հանդիպումները տեղի են ունենում Ժնևի մոտ՝ Բելռիվում, Կորսյեում և Պորտ դե Կորսյեում, Ժնևի լճի ափին գտնված ձկնորսական այդ փոքրիկ գյուղում, որտեղ Լենինը սենյակ է վարձում։ Վ. Ի. Լենինը, Գ. Վ. Պլեխանովը, Վ. Ի. Զասուլիչը, Ա. Ն. Պոտրեսովը, Ն. Ե. Բաումանը և Յու. Մ. Ստեկլովը քննարկում են «Իսկրայի» և «Զարյայի» հրատարակման հարցը։ Սուր տարաձայնություններ են առաջանում Վ. Ի. Լենինի և Գ. Վ. Պլեխանովի միջև, որոնք քիչ էր մնում հասցնեին «Իսկրայի» հրատարակման ձախողմանը։ Սակայն Լենինի ձեռնարկած վճռական միջոցառումների հետևանքով կայծն սկսում է հույս տալ՝ նորից բորբոքվելու։ 1900 թ. վերջին լայացիգում լույս է տեսնում «Իսկրայի» առաջին համարը։

1901 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Վ. Ի. Լենինը գնում է Ցյուրիխ, որտեղ «ընկեր Ֆրեյ» անվամբ մասնակցում է մի շարք խորհրդակցությունների, իսկ 1902 թ. նոյեմբերին Լոնդոնում, Ժնևում, Բեռնում և Ցյուրիխում ռեֆերատներ է կարդում՝ մերկացնելով էսեռներին և պաշտպանելով հեղափոխական մարք-

1 Վ. Ի. Լենին, հ. 37, էջ 433։

սիզմի սկզբունքները։ 1903 թ. գարնանը, «Իսկրայի» հրատարակությունը Ժնև տեղափոխվելու կապակցությամբ, Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան Լոնդոնից տեղափոխվում են Ժնև, որտեղ մնում են մինչև 1905 թ. հոկտեմբերը։ «Ժնևում, — հիշում է Ն. Կ. Կրուպսկայան, — մենք տեղավորվեցինք քաղաքի արվարձանում՝ Սեշերոն բանվորական թաղամասում մի ամբողջ տնակ գրավեցինք. ներքևում մեծ խոհանոցն էր՝ քարե հատակով, վերևում՝ երեք փոքրիկ սենյակ։ Խոհանոցը միաժամանակ մեր ընդունարանն էր։ Կահկարասիների պակասը լրացվում էր գրքերի և ամանեղենների արկղներով։ Իգնատը (Կրասիկովը) մեր խոհանոցը կատակով անվանեց «կոնդրաբանդիստների ապաստարան»։ Իսկույն ևեթ անելանելի ժխոր ստեղծվեց։ Երբ հարկավոր էր լինում որևէ մեկի հետ առանձնակի խոսելու, գնում էինք մոտիկ գտնվող պուրակը կամ լճի ափը»[2]։



Ժնևի Շմեն դյու Ֆուայե փողոցի № 10 տունը, որտեղ Վ. Ի. Լենինն ապրել է 1903—1904 թվականներին

Սեշերոնը Ժնևի հյուսիս-արևմտյան մասում է։ Մենք եղանք լենինյան այդ վայրում, բայց Շմեն դյու Ֆուայե փողոցի № 10 տունը, որտեղ ապրել է Լենինը, վաղուց քանդված էր։ Այնտեղ Լենինը բնակվել է մինչև 1904 թ. աշունը։ Հիշյալ տանը Լենինի մոտ էին հավաքվում համատեղ պայքարի ընկերները, որոնց նկատմամբ նա վերին աստիճանի հոգատար էր։

Շատերի հետ միասին Սեշերոնում Լենինին հաճախակի այցելել է Ստեփան Շահումյանը, որը մեծ առաջնորդի հետ անձամբ ծանոթացել է 1903 թ. գարնանը Ժնևում, գուցե հենց Ֆուայե փողոցի վրա գտնված տանը։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հնագույն գործիչ Մ. Գ. Տորոշելի-

2 Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ, Մոսկվա, 1933, էջ 145։

Ձեն պատմում է, որ 1904 թ. սկզբին լինելով Ժնևում, նա դիմել է Ստ. Շահումյանին՝ ցանկություն հայտնելով անձամբ ծանոթանալ Լենինի հետ։

— Իսկ դրանից հեշտ ինչ կա որ, — պատասխանել է նրան Ստ. Շահումյանը, — հենց վաղը գնանք նրա մոտ և ես քեզ կծանոթացնեմ Լենինի հետ։

Նշանակված ժամին նրանք գնում են Լենինի մոտ, զրուցում գործերի մասին։ Լենինը հարցեր է տալիս, հետաքրքրվում Կովկասում տարվող կուսակցական աշխատանքների վիճակով։

Սեշերոնում Լենինի մոտ հաճախակի եղել են Բոգդան Կնունյանցը՝ իր կնոջ՝ հեղափոխական գործիչ Ելիզավետա Գոլիկովայի հետ, Իսահակ Լալայանցը և նրա կինը՝ հին բոլշևիկ Պ. Ի. Կուլյաբկոն, Արշակ Զուրաբյանը և ուրիշներ։ 1903 թ. հունիսի սկզբին կուսակցության երկրորդ համագումարի պատգամավորները հավաքվելով Ժնևում, անմիջապես ուղևորվում են Լենինի տունը՝ Սեշերոն։ Նրանց թվում էին նաև կովկասյան լենինյանների ներկայացուցիչներ Բ. Կնունյանցը և Ա. Զուրաբյանը։ Երեկոները համագումարների պատգամավորները Լենինի հետ հաճախում էին «Լանդոլտ» սրճարան՝ Ժնևի համալսարանի մոտ։ Մենք եղանք «Լանդոլտում», տեսանք այն սենյակը, որտեղ եղել է Լենինը, այն պահպանվել է գրեթե ինչպես։

1904 թ. նոր տարին Լենինն իր ընկերների հետ միասին դիմավորել է «Լանդոլտում»։ «Նոր, 1904 թ. նախօրյակն էր, — հիշում է հին բոլշևիկ Ց. Ս. Զելիկսոն-Բոբրովսկայան։ — Նոր տարին, — ասում էր մեզ Վլադիմիր Իլյիչը, — մեր երկրում հեղափոխական շարժման հետագա վերելք կբերի, նա մեզ կտանի դեպի վճռական մարտեր։ Այդ պատճառով էլ, ընկերնե՛ր, եկեք մի կերպ ուրախ անցկացնենք նոր տարվա գիշերը։

Եվ ահա մի ահագին խմբով մենք գնացինք օպերա՝ «Կարմեն» լսելու։ Ներկայացումից հետո մտանք մեր սիրած «Լանդոլտ» սրճարան, մեկական գավաթ գարեջուր կամ մեկական գավաթ սուրճ խմեցինք և գնացինք թրև գալու Ժնևի՝ այդ գիշեր վառ լուսավորված փողոցներում, որտեղ տեղի էր ունենում տրադիցիոն նոր տարվա կառնավալը։ Դա հին Շվեյցարիայի դեմոկրատական մի լավ տրադիցիա էր։ Ամբողջ ժողովուրդը դուրս է գալիս փողոց, շատերը դիմակներով, վառվում են բազմագույն լույսեր, անծանոթ մարդիկ ուրախ կերպով խոսում են իրար հետ, նվագում է երաժշտությունը, պարում է երիտասարդությունը, ուրախ են և՛ ժողովուրդը և՛ մենք...

Մենք բոլորս էլ այդ նոր տարվա գիշերը մի տեսակ առանձնապես ուրախ էինք։ Մեզ հետ էր Վլադիմիր Իլյիչը...»[3]։

* *

ՌՍԴԲՊ երկրորդ համագումարից հետո, որը տեղի ունեցավ 1903 թ. հուլիս-օգոստոսին, Բրյուսելում և Լոնդոնում, Վ. Ի. Լենինը վերադառնում է Ժնև։ Հոկտեմբերին Ժնևում տեղի է ունենում «Ռուսական հեղափոխական սոցիալ-դեմոկրատների արտասահմանյան լիգայի» երկրորդ համագումարը, որտեղ Լենինը վճռական պայքար է մղում Մարտովի, Տրոցկու և մյուս օպորտունիստների դեմ։ Այս պայքարում մյուս բոլշևիկների հետ միասին Լենինին մեծ օգնություն են ցույց տալիս նաև Իսահակ Լալայանցն ու Բոգդան Կնունյանցը, որոնք այն ժամանակ աշխատում էին Ժնևում։ Ի. Լալայանցը, որին Լենինը

3 Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, հ. 1, էջ 314։

շատ լավ գիտեր 90-ական թվականներից, «Իսկրայի» տպարանի վարիչն էր, իսկ Բոդդան Կնունյանցն աշխատակցում էր լենինյան «Իսկրային» և իրականացնում կապը Կովկասի կուսակցական կազմակերպությունների հետ։ Նա Ժնևում ստեղծում է առաջին հայ ուսանողական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։

1903 թ. վերջին, Լենինի նախաձեռնությամբ, Ժնևում կուսակցության Կենտրոնական կոմիտեին կից ստեղծվում է հայերեն և վրացերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակության հանձնաժողով, որը թարգմանում և հրատարակում է Մարքսի, Էնգելսի, Լենինի մի շարք աշխատությունները, կուսակցական փաստաթղթեր։ Լենինի հանձնարարությամբ այդ հանձնաժողովը գլխավորում էր Ստ. Շահումյանը։ Նա հաճախակի լինում էր կուսակցության տպարանում՝ Ռոնա գետից քիչ հեռու Կուլուվրենյոր փողոցի № 27 տանը, որտեղ տպագրվում էին հանձնաժողովի հրապարակությունները։ Դրանցից շատերի վերջում նշվում էր Կոլին փողոցի № 3 տունը որպես Վ. Ուլյանովի հասցե։ Այդ տունն այն ժամանակ եղել է բոլշևիկ վտարանդիների ճաշարանը, որի տնօրենը եղել է հին բոլշևիկ Օլգա Լեպեշինսկայան՝ իր ամուսին, ականավոր բոլշևիկ Պ. Լեպեշինսկու հետ միասին։ Այդ տունը չի պահպանվել։

Վտարանդիների ճաշարանում Լենինը պարապմունքներ էր անցկացնում այն բոլշևիկյան խմբերի հետ, որոնք Ռուսաստան կուսակցական աշխատանքի էին մեկնում։ «Դա մի կուսակցական դպրոց էր, — հիշում է Օ. Բ. Լեպեշինսկայան, — որտեղ Վլադիմիր Իլյիչի ղեկավարությամբ ուսումնասիրում էին կուսակցության ծրագիրը։ Այդ դպրոցի գոյության երեք տարիների ընթացքում հաճախ եմ առիթ ունեցել ներկա գտնվելու Իլյիչի անցկացրած պարապմունքներին և միշտ էլ հիացել եմ նրա մանկավարժական ձիրքով»[4]։

1903—1904 թթ. կուսակցության Ժնևի տպարանում տպագրվել են Վ. Ի. Լենինի «Գյուղական չքավորությանը» և «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ» աշխատությունները։ 1904 թ. օգոստոսին, Լենինի ղեկավարությամբ Ժնևում ստեղծվում է բոլշևիկյան գրականության հրատարակչություն, որը կոչվում էր «Սոցիալ-դեմոկրատական կուսակցական գրականության Վ. Բոնչ-Բրուևիչի և Ն. Լենինի հրատարակչություն»։ Այն ուներ իր կոոպերատիվ տպարանը Կարուժ փողոցի № 93 տանը։ Այստեղ էլ 1904 թ. աշնանը տպագրվում է Վ. Ի. Լենինի «Զեմստվային կամպանիան և «Իսկրայի» պլանը» բրոշյուրը։ Վ. Ի. Լենինը նույն թեմայով ռեֆերատներ է կարդացել Ժնևում և այլ վայրերում։ Մարտին նա Ժնևի սոցիալ-դեմոկրատների ժողովում ճառ է արտասանում նվիրված Փարիզի կոմունայի տարեդարձին։

1904 թ. սկզբին Լենինի նախաձեռնությամբ Ժնևում հիմնադրվում է կուսակցության գրադարան և արխիվ, որտեղ կենտրոնացվում և պահպանվում են կուսակցական փաստաթղթերը, թերթերը, լենինյան գրական ժառանգությունը։ Միայն 1905 թ. հունիսին այդ գրադարանն ու արխիվը ստացել են 107 անուն թերթ և ամսագիր՝ տարբեր լեզուներով, այդ թվում նաև հայերեն։ Արխիվից և գրադարանից լայնորեն օգտվում էին Լենինը և շատ այլ բոլշևիկներ։ Այնտեղ սահմանված էր կանոնավոր հերթապահություն, որի ցուցակը պահպանվել է։ Ժնևի գրադարանն ու արխիվը կոչվում էր վտարանդի սոցիալ-դեմոկրատ Գ. Ա. Կուկլինի անվամբ։ Նրա վարիչը հին բոլշևիկ Վ. Ա. Կարպինսկին

[4] Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, հ. 1, էջ 221—222։

էր։ Գրադարանի և արխիվի ֆոնդերը 1923—24 թթ. տեղափոխվել են Մոսկվա և պահպանվում են ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտում։ Դրանք բացառիկ կարևոր նշանակություն ունեն կուսակցության պատմության ուսումնասիրության համար։

Վ. Ի. Լենինը շատ ժամանակ էր հատկացնում գրադարաններում աշխատելուն։ Տիրապետելով օտար լեզուներին, նա բազմաթիվ գրքեր կարդում էր բնագրի լեզվով։ Շվեյցարիայում հիանալի վիճակում էր գտնվում գրադարանային գործը, հատկապես լավ էր կազմակերպված գրքերի փոխանակությունը գրադարանների միջև։ Ժնևում Վ. Ի. Լենինը պարապել է համալսարանի և «Ընթերցանության ընկերության» գրադարաններում։ Մենք մի քանի ժամ անցկացրինք լենինյան այդ վայրերում։ Համալսարանի պրոֆեսորները մեզ ընդունեցին սիրալիր։ Զրույցի ընթացքում իրենց համալսարանի մասին նրանք խոսում էին հպարտությամբ, նշում, որ այն հին է ու աշխարհահռչակ։ Պրոֆեսորներից մեկը պատմեց, որ ինքը տեսել է Լենինին իր ազգականի տանը։ Վ. Ի. Լենինը նրան հյուրասիրել է Շվեյցարիայի համար անսովոր՝ ռուսական կոնֆետներով։ Պատմելով համալսարանի գրադարանի մասին, պրոֆեսորը նշեց, որ Լենինն այնտեղ զբաղվում էր խիստ ռեժիմով, կարդում բազմաթիվ գրքեր սոցիալ-քաղաքական և փիլիսոփայական թեմաներով։ Մինչդեռ նույն ժամանակ, նկատեց պրոֆեսորը, այդ գրադարանում զբաղվող Մուսոլինին՝ հետագայում իտալական ֆաշիստների տխրահռչակ պարագլուխը, կարդում էր արկածային վեպեր։

Գրադարանի այն դահլիճում, որտեղ պարապել է Լենինը, մեզ ցույց տվեցին առանձին կապոցով պահվող նրա կարդացած գրքերը և Վ. Ի. Լենինի գրած ու Ժնևում հրապարակված բրոշյուրները։ Գրադարանի ընթերցողների հաշվառման գրքում մենք կարդում ենք Լենինի ստորագրությունը՝ Վ. Ուլյանով։ Այդ գրքում Վ. Ուլյանովի անունն առաջին անգամ հիշատակվում է 1903 թ. հոկտեմբերի 15-ին։ Միայն առաջին էմիգրացիայի տարիներին, մինչև 1905 թ., Լենինը համալսարանի գրադարանում եղել է մոտ 30 անգամ։

«Ընթերցանության ընկերության» գրադարանը գտնվում է հին քաղաքի Ռյու Գրանդ փողոցի № 11 տան բակում։ Գրադարանում պահպանվել է ընկերության կոմիտեի արձանագրությունների գիրքը, որտեղ գրանցվում էին նոր անդամների ընդունելության մասին որոշումները։ 1904 թ. դեկտեմբերի 13-ի արձանագրությունում նշվում էր. «Պարոն նախագահը հայտարարում է պարոններ Վլադիմիր Ուլյանովի և Էռնստ Ռոշի թեկնածությունները»։ «Ընթերցանության ընկերության» անդամների ցուցակի 39-րդ էջում նշված է. «Վլադիմիր Ուլյանով»։ Գրադարանի դահլիճներից մեկի համեստ մի անկյունը եղել է Լենինի պարապմունքների սիրած վայրը։

Իլյիչը ամբողջ օրերով անց էր կացնում «Ընթերցանության ընկերության» գրադարանում, որտեղ կար հսկայական գրադարան և աշխատանքի հիանալի պայմաններ, — հիշում է Ն. Կ. Կրուպսկայան, — ստացվում էին բազմաթիվ թերթեր և ժուռնալներ՝ ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն լեզուներով։ Շատ հարմար էր այդ գրադարանում պարապելը։ Ընկերության անդամները, որ մեծ մասամբ ծերացած պրոֆեսորներ էին, հազվադեպ էին հաճախում այդ գրադարանը։ Իլյիչի տրամադրության տակ կար մի ամբողջ կաբինետ, որտեղ նա կարող էր գրել, քայլել անկյունից-անկյուն, ուրվագծել հոդվածներ, դարակներից վերցնել ուզած գիրքը։

* * *

Կուսակցական-հեղափոխական աշխատանքի ծանր պայմանները, մենշևիկների պառակտիչ գործունեությունը, Պլեխանովի հակառակ դիրքավորումը, էմիգրանտական կյանքի դժվարությունները խիստ ազդում են Լենինի առողջության վիճակի վրա։ Ընկերների հորդորներով, 1904 թ. ամռանը, Կրուպսկայայի հետ միասին, Լենինը ճանապարհորդություն է կատարում Շվեյցարիայում։

Հին բոլշևիկ Մարիա Մոիսեևնա Էսսենի հետ միասին, Ժնևի լճի վրայով, նավով նրանք գնում են Մոնտրեյո, այցելում են Շիլիոնի ամրոցը, 16-րդ դարում Շվեյցարիայի ականավոր քաղաքական գործիչ Բոնիվարի զնդանը, որն այնքան գունեղ նկարագրել է Բայրոնը «Շիլիոնի կալանավորը» պոեմում, բարձրանում են Դանդյու Միգի լեռան գագաթը։ Մ. Էսսենը պատմում է, թե ինչպես այդ զբոսանքի ժամանակ Լենինը մեծ ջանասիրությամբ Կրուպսկայայի համար դաշտային ծաղիկներ է հավաքել։ «Նադյուշան ծաղիկներ սիրում է», — ասաց նա և պատանեկան ճարպկությամբ ու արագությամբ իսկույն մի ամբողջ գիրկ ծաղիկ հավաքեց», — հիշում է Մ. Էսսենը[5]։

Լողանում մի քանի օր հանգստանալուց հետո Լենինը և Կրուպսկայան Մոնտրեյոյի կողմից իջնում են Ռոնա գետի հովիտը և գետի ընթացքով դեպի վերև բարձրանալով Հեմմի լեռնանցքով հասնում են Օբերլանդ և ապա Բրիենցյան լիճը, որտեղ մի քանի օր հանգստանում են Իզելդվալդ գյուղում։ Այնուհետև Մայրինգենով նրանք գնում են Լյուցեռն քաղաքը։ Ժնև վերադառնալիս՝ օգոստոսի վերջին նրանք հանգստանում են Լոզանից քիչ հեռու Լագ դե Բրե գյուղակում։ Սեպտեմբերի սկզբին Լենինը և Կրուպսկայան կրկին Ժնևում են։

Շվեյցարիայի գեղեցիկ վայրերում կատարած ամառային այս ճանապարհորդությունը բարերար ազդեցություն է ունենում Լենինի առողջական վիճակի վրա։ Բայց ճանապարհորդությունը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Լենինը և Կրուպսկայան մշտապես զգում էին փողի պակասություն, վատ էին սնվում, չէին կարողանում գոնե ժամանակավորապես կտրվել կուսակցական և գրական աշխատանքներից։ Վերոհիշյալ ճանապարհորդության մասին Ն. Կ. Կրուպսկայան հետագայում գրել է. «Ես ու Վլադիմիր Իլյիչը տոպրակները վերցրինք և մեկ ամսով բարձրացանք սարերը։ Մենք իսկապես ընտրում էինք ամենավայրի կածանները, հասնում էինք ամենախուլ տեղերը՝ մարդկանցից հեռու։ Թափառեցինք մենք մի ամբողջ ամիս. այսօր չգիտեինք ուր ենք լինելու վաղը, երեկոները սարսափելի հոգնած անկողին էինք ընկնում ու անմիջապես քնում։

Դրամի պակասություն էինք զգում. սնվում էինք չոր ու ցամաք. ուտում էինք պանիր ու ձու, հետը խմում գինի ու ալբյուրի սառը ջուր, իսկ ճաշում էինք հազվադեպ։ Սոցիալ-դեմոկրատական մի փոքրիկ գինետնում մի բանվոր խորհուրդ տվեց. «Ճաշեցեք ոչ թե տուրիստների, այլ կառապանների, շոֆերների, հասարակ բանվորների հետ. այնտեղ կրկնակի էժան է ու ավելի կուշտ են կերակրում»։ Մենք այդպես էլ արինք... Վլադիմիր Իլյիչը առանձին բավականությամբ էր ընդհանուր սեղանի նստում, առանձին ախորժակով էր ուտում ու եռանդով գովում էժան ու սննդարար ճաշը։ Այնուհետև մենք նորից

5 Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, հատ. I, էջ 332։

տոպրակները գցում էինք մեջքներիս և առաջ անցնում... Մեզ հմայել էին հավիտենական ձյունով ծածկված սարերը, կապույտ լճերը, կատաղի ջրվեժները։

Մի ամսվա նման ժամանցից հետո Վլադիմիր Իլյիչի ջղերը կարգի ընկան։ Կարծես նա լվացվեց լեռան առվակի ջրով ու մաքրեց իրենից ծանր խռովությունների ոստայնը»։

Պահպանվել են Վ. Ի. Լենինի նամակները մորը՝ Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային և քրոջը՝ Մարիա Իլյինիչնային (Մանյաշային) գրված Շվեյցարիայից այս ճանապարհորդության մասին։ Նրանց մի մասը Շվեյցարիայի տեսարաններով բացիկներ են։ 1904 թ. հուլիսի 7-ին Լենինը Ֆրուտիգենից Կանդերշտեգի տեսարաններով բացիկ է ուղարկում մորը և գրում է. «Թափառաշրջիկներից բարևներ թանկագին մայրիկին և Մանյաշային»[6]։ Մեկ շաբաթ հետո Իզելդվալդից (գյուղ Բրինց լճի հարավ-արևելյան ափին), նույն վայրի տեսարանով բացիկում նշում է. «Ողջույն մեր Մոնրեպոյից։ Մոտ օրերս նորից ճանապարհվում ենք»[7]։ Փոքր Շայտեգ և Յունգֆրաու սարերի տեսարաններով մի այլ բացիկում Լենինը հայտնում էր, որ իրենք եղել են Յունգֆրաու տանող նոր ճանապարհի մոտ և Մայրինգեն քաղաքով գնում են Լյուցեռն։ Հուլիսին Ժնև, Վ. Դ. Բոնչ-Բրուևիչին ուղարկած նամակում խնդրում էր գրել իրեն և թերթեր ուղարկել Մայրինգենի հասցեով՝ ցպահանջ։

* * *

1904 թ. հուլիսի վերջին, Լենինի ղեկավարությամբ, Ժնևի շրջակայքում տեղի է ունենում 22 բոլշևիկների խորհրդակցություն, որին մասնակցում էին Ն. Կ. Կրուպսկայան, Մ. Ս. Օլմինսկին, Վ. Դ. Բոնչ-Բրուևիչը, Պ. Ն. և Օ. Բ. Լեպեշինսկիները, Մ. Մ. Լյադովը, Բ. Մ. Կնունյանցը, Պ. Ա. Կրասիկովը, Լ. Ա. Ֆոտիևան, Ս. Ի. Գուսևը, Վ. Մ. Վելիչկինան և ուրիշներ։ Խորհրդակցությունն ընդունում է Լենինի գրած գիմումը «Կուսակցությանը»։ Այն դառնում է կուսակցության երրորդ համագումար հրավիրելու պայքարի ծրագիր։ Շվեյցարիայից Լենինը նամակներ էր գրում Ռուսաստան, մարդիկ է ուղարկում տեղերում թղթակցություններ հավաքելու նոր թերթի համար և կազմակերպելու երրորդ համագումարի հրավիրումը։ Այդ ժամանակաշրջանում Լենինի գրագրությունները արտասահմանի հետ հասնում էր ամիսը 300 նամակի։ 1904 թ. վերջին Ժնևում Լենինը ղեկավարում է բոլշևիկների ժողովը, որը որոշում է հրատարակել կուսակցական մեծամասնության օրգան՝ «Վպերյոդ» թերթը։

1905 թ. հունվարի 4-ին Ժնևում լույս է տեսնում «Վպերյոդի» առաջին համարը՝ Լենինի խմբագրությամբ։ Խմբագրության հասցեն էր՝ Կոլին փողոց № 3, Վ. Ուլյանով, իսկ տպարանի հասցեն՝ Կարուժ փողոց № 93։ Այս փողոցներն այժմ կան, բայց առանց խմբագրության և տպարանի շենքերի։ 1905 թ. մայիսից նույն տեղերում լույս է տեսել «Պրոլետարի» բոլշևիկյան թերթը։

«Վպերյոդ» թերթի առաջին իսկ համարներում Լենինը գրում էր Ռուսաստանում հեղափոխական պոռթկումի մոտեցման մասին։ 1905 թ. հունվարի 9-ի (22-ի) իրադարձությունների լուրը Ժնև հասավ հաջորդ օրվա առավոտյան։ Լենինն ու Կրուպսկայան գրադարան գնալիս հանդիպում են Լունաչարսկուն և նրա կնոջը, որոնք խորապես հուզված էին հունվարի 9-ի դեպքերից,

6 Վ. Ի. Լենին, հ. 37, էջ 363։
7 Նույն տեղում, էջ 364։

որի մասին նրանք իմացել էին շվեյցարական «Լյա Սյուիս» թերթից։ Լենինը և Լունաչարսկին անմիջապես գնում են Կարուժ փողոցը կամ «Կարուժկա», ինչպես անվանում էին այն վտարանդիները։ Մենք եղանք այդ փողոցում, որն այն տարիներին բնակեցված էր ռուս վտարանդիներով։ Այնտեղ կարելի էր իմանալ ամեն մի նորություն Ռուսաստանի մասին։ «Մենք, — հիշում է Ն. Կ. Կրուպսկայան, — գնացինք այնտեղ, ուր բնազդորեն ուղղվեցին բոլոր բոլշևիկները, որոնց ականջին էր հասել Պիտերում տեղի ունեցած դեպքերի լուրը՝ Լեպեշինսկիների էմիգրանտական ճաշարանը։ Ուզում էինք միասին լինել։ Հավաքվածները միմյանց հետ գրեթե չէին խոսում, բոլորն էլ չափազանց հուզված էին։ Երգեցինք «Դուք զոհ գնացիրը», մեր դեմքերը կենտրոնացված էին։ Բոլորն էլ գիտակցում էին, որ հեղափոխություն արդեն սկսվել է, որ դեպի ցարն ունեցած հավատի ուղիները փակված են, որ այժմ արդեն բոլորովին մոտ է այն ժամանակը, երբ «կխորտակվի կամայականությունը և ոտքի կելնի մեծ. հզոր ու ազատ ժողովուրդը»...

Մենք սկսեցինք ապրել այն յուրահատուկ կյանքով, որով ապրում էր այն ժամանակ Ժնևի ամբողջ էմիգրացիան՝ տեղական «Տրիբյուն դը Ժնև» թերթի մի համարից մինչև մյուսը։

Իլյիչի բոլոր մտքերը սևեռված էին Ռուսաստանին»։

«Վպերյոդի» էջերում, Ժնևից գրած նամակներում, այնտեղ ունեցած ելույթներում, զրույցներում Լենինը խորապես լուսաբանում էր հեղափոխության ընթացքը, տալիս նրա գնահատականը, նշում հեռանկարները։ Ուշադիր հետևելով Ռուսաստանի իրադարձություններին՝ Լենինը միաժամանակ մանրամասն ուսումնասիրում էր այն ամենը, ինչ գրել էին Մարքսն ու Էնգելսը հեղափոխության ու զինված ապստամբության մասին։ Նա կարդում էր շատ գրքեր ռազմական արվեստի վերաբերյալ, խորանում նրա տեխնիկական և կազմակերպական բոլոր հարցերում։ Այդ օրերին Լենինը հաճախ էր լինում Ժնևի «Ընթերցանության ընկերությունում»։ «Ընկերության ծառայողը վկա էր, — նշում է Ն. Կ. Կրուպսկայան, — թե ինչպես ամեն առավոտ վաղ գալիս էր մի ռուս ռևոլյուցիոներ՝ ցեխից պաշտպանվելու համար շվեյցարացու նման ետ ծալած էժանագին անդրավարտիքով, որը նա մոռանում էր բաց թողնել, վերցնում նախընթաց օրվանից վերցրած գիրքը բարիկադային պայքարի, հարձակման տեխնիկայի մասին, նստում սեղանի մոտ իր սովորական տեղը՝ պատուհանին կից, իր սովորական շարժումով հարթում ճաղատ գլխի նոսր մազերը և խորասուզվում ընթերցանության մեջ։ Երբեմն միայն վեր էր կենում՝ վերցնելու դարակից մեծ բառարանը և փնտրելու այնտեղ անծանոթ տերմինի բացատրությունը, իսկ հետո ետ ու առաջ քայլում և նստելով սեղանի մոտ, արագորեն կենտրոնացած, մանր ձեռագրով ինչ-որ բաներ գրում՝ քառածալ թերթիկների վրա»։

«Ընթերցանության ընկերության» գրադարանում Լենինը կարդացել է Փարիզի կոմունայի գեներալ Կլյուզերեի հուշագրությունը ապստամբության բարիկադային տակտիկայի և տեխնիկայի մասին։ «Վպերյոդում» նա արտատպել է Կլյուզերեի գրքից մի գլուխ՝ «Փողոցային պայքարը» վերնագրով և գրել նրա համար առաջաբան և Կոմունայի գործի նշանավոր գործչի համառոտ կենսագրականը։

1905 թ. սկզբից Ժնևում գործում էր մեծամասնականների կուսակցական ակումբ, որին կից ստեղծվել էին կուսակցական կյանքի հարցերի ու շարժման

չորս սեկցիա՝ կազմակերպական, պրոպագանդիստական, ագիտացիոն, տեխնիկական։ Բոլշևիկների Ժնևի ակումբում հաճախակի կազմակերպվում էին զեկուցումներ, դասախոսություններ, որոնց ակտիվ մասնակցում էր Լենինը։ Փետրվարին նա ելույթ է ունենում այդ ակումբի կազմակերպական նիստում, ուր լսվել էր Ա. Մ. Էսսենի (Ստեպանովի) զեկուցումը բնակչության ոչ պրոլետարական խավերի մեջ տարվող աշխատանքի մասին։

1905 թ. մարտին Ժնևի քաղաքական վտարանդիների ռուսական գաղութի ժողովում Լենինը հանդես է գալիս մեծ զեկուցումով Փարիզի կոմունայի մասին, նշելով, որ «այժմյան շարժման մեջ մենք բոլորս էլ Կոմունայի ուսերին ենք կանգնած»։

Գրեթե ամեն երեկո Լենինը և մյուս բոլշևիկները հավաքվում էին «Լանդոլտ» ճաշարանում, երկար նստում մի բաժակ գարեջրով և քննարկում Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձությունները, կազմում պլաններ։

1905 թ. ապրիլին կուսակցության երրորդ համագումարի պատգամավորները հավաքվում են Ժնևում, որտեղ Լենինը զրույցում է նրանց հետ, անցկացնում խորհրդակցություն և ապա մեկնում Լոնդոն՝ ղեկավարելու համագումարի աշխատանքները։ Համագումարից հետո վերադառնալով Ժնև, Լենինը զեկուցումներ է տալիս նրա արդյունքների մասին։ Հուլիսի վերջին Ժնևում, Կոլին փողոցի վրա գտնվող տպարանում լույս է տեսնում Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ» գիրքը, որտեղ վերլուծվում է բոլշևիկների համագումարի տակտիկական գիծը, պարզաբանվում պրոլետարիատի կոնկրետ խնդիրները դեմոկրատական հեղափոխության մեջ, մերկացվում մենշևիկների օպորտունիստական գիծը։ Լենինի այս հանճարեղ երկը տարածվում է ամբողջ Ռուսաստանում, հեղափոխության թեժ պահին զինելով նրա մարտիկներին, ավելի ուժգին բորբոքելով նրա բոցը։ 1905 թ. հոկտեմբերին Ժնևում, կուսակցության Կենտկոմի հրատարակությամբ, առանձին գրքով լույս է տեսնում երրորդ համագումարի արձանագրությունների լրիվ տեքստը։ Գրքում տեղ են գտնում համագումարում Լենինի տված զեկուցումները, ճառերն ու ելույթները, բանաձևերի նրա կազմած նախագծերը։ Համագումարի արձանագրությունների ստուգումը կազմակերպվում է Լեպեշինսկիների ճաշարանում։

Բազմաթիվ հարցերի հետ միասին Լենինը կոնկրետ կերպով զբաղվում է նաև Ժնևում ու Եվրոպայի այլ վայրերում գործող հայկական կազմակերպությունների խնդրով, մերկացնում է դաշնակներին և մյուս նացիոնալիստական կուսակցություններին։ 1905 թ. ապրիլին, Լենինի հանձնարարությամբ, Ստ. Շահումյանը գնում է Բեռն մասնակցելու «Եվրոպայի հայ ուսանողների միության» Բեռնի կոնգրեսի աշխատանքներին։ «Միությունը» գտնվում էր դաշնակների ազդեցության տակ, սակայն հայ բոլշևիկներին Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ հաջողվում է պառակտել այն՝ անջատելով միությունից սոցիալ-դեմոկրատ հայ ուսանողներին։ Այդ կապակցությամբ Լենինը «Վպերյոդի» ապրիլի 17-ի համարում տպագրում է Բեռնի կոնգրեսի սոցիալ-դեմոկրատ պատգամավորների մանիֆեստը ուղղված Եվրոպայի բոլոր սոցիալ-դեմոկրատ հայ ուսանողներին։ Լենինը մերկացնում էր «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» անդամներին, անվանելով նրանց «մի զույգ ժնևյան կազմալուծիչներ», որոնք Ժնևում «հրատարակում են ամենադատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի

հետ», «բունդական կրեատուրա», հորինված կովկասյան բունդիզմը սնելու համար»։ Լենինյան «Վպերյոդ» և «Պրոլետարի» թերթերը լայնորեն լուսաբանում էին կովկասյան իրականության հարցերը, տպագրում էին Մ. Ցխակայայի, Ստ. Շահումյանի, Ռ. Կնունյանցի և Կովկասի մյուս բոլշևիկների հոդվածները։

Լենինը հիանալի գիտեր գործերի վիճակը Ռուսաստանում, նրա ամենահեռավոր ծայրամասերում։ «Ամեն անգամ մենք զարմանում էինք, — հիշում է Մ. Ն. Լյադովը, — թե Իլյիչը նստած այնտեղ՝ Ժնևում, որքան ճիշտ էր կարողանում գնահատել իրերի դրությունը, թե նրա առջև որքան պարզորոշ էր ուրվագծվում այն խճճված փոխհարաբերությունների պատկերը, որ ստեղծվել էին Ռուսաստանում ռուս-ճապոնական անհաջող պատերազմի կապակցությամբ, արյունալի հունվարի 9-ից հետո։

Վ. Ի. Լենինը ամբողջ էությամբ ձգտում էր դեպի Ռուսաստան։ 1905 թ. հունվարին նա գրում էր. «Ժնևում, մեր անիծված հեռվից, անչափելիորեն ավելի դժվար է իրադարձությունների հետևից հասնել»[8]։ Լենինը երազում էր այն ժամանակի մասին, երբ ինքը կկարողանա խոսել ոչ թե «Անտանելի էմիգրանտական արտասահմանից», «ոչ թե ժնևյան անիծյալ հեռվից, այլ հազարավոր բանվորների ժողովների առջև Մոսկվայի և Պետերբուրգի փողոցներում, մուժիկների ազատ ժողովների առջև»[9]։

1905 թ. հոկտեմբերի վերջին Լենինը ռեֆերատ է կարդում Ժնևի ռուս սոցիալ-դեմոկրատների ժողովում՝ Ռուսաստանի վերջին քաղաքական իրադարձությունների մասին, կարգի է բերում իր թղթերն ու նամակները, դասավորում է դրանք ճամպրուկի մեջ, պահ տալիս այն և մի քանի օրից հետո մեկնում՝ Պետերբուրգ։ Հինգ տարվա էմիգրացիայից հետո նա կրկին Ռուսաստանում էր, որտեղ անմիջապես եռանդուն հեղափոխական գործունեություն է ծավալում։

* * *

Ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո, 1908 թ. հունվարի 7-ի երեկոյան, Լենինը և Կրուպսկայան նորից Ժնևում են։ Սկսվում է նրանց երկրորդ էմիգրացիան, որը տևում է մինչև 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում։ Դա առաջին էմիգրացիայից ավելի ծանր էր։

Լենինը Ժնև էր մեկնել ֆինն խոհարարի փաստաթղթերով, իսկ Կրուպսկայան՝ ամերիկյան քաղաքացուհու։ Նրանք տեղավորվում են ժամագործների թաղամասում, դե Պոն փողոցի № 17 տանը, մի փոքր, ցուրտ ու անհրապույր բնակարանում, որը վարձակալել էին ոմն Կյուպֆերից։ Այդ ժամանակ Ժնևում հին բոլշևիկներից ապրում էին Միխա Ցխակայան, Վ. Կարպինսկին և Օլգա Ռավիչը։ Կարպինսկին իր կնոջ հետ բնակվում էր Յուգո դե Ջենդ փողոցի վրա, Կուկլինի անվան ռուսական այն գրադարանի շենքում, որի վարիչն էր նա։

Լենինը պարապում էր գրադարանում, իսկ երեկոները Կրուպսկայայի հետ գնում կինո կամ թատրոն։ «Հազվադեպ էինք մինչև վերջ նստում, — հիշում

---

8 Վ. Ի. Լենին, հ. 8, էջ 14։

9 Նույն տեղում, հ. 8, էջ 359—360։

է Կրուպսկայան, — սովորաբար ներկայացման կեսին հեռանում էինք, թափառելու մի որևէ տեղ, ամենից հաճախ լճի ափին»։

Չնայած հեղափոխության պարտությանը, Լենինը և լենինյանները չէին վհատվում, նրանք նախապատրաստվում էին նոր գրոհների։ Ժնև վերադառնալուց անմիջապես հետո Լենինը համախմբում է տեղի կուսակցական ուժերը, ելույթներ է ունենում Ժնևի վտարանդիական ակումբում, ռուս վտարանդիների ժողովներում։ Նա առանձնապես մեծ եռանդ և ուժ է ներդնում կուսակցական տպագիր օրգանի հրատարակությունը կազմակերպելու գործում։ Փետրվարին Ժնևում, Լենինի ղեկավարությամբ, լույս է տեսնում «Պրոլետարի» թերթի հերթական 21-րդ համարը, որտեղ տպագրված իր հոդվածում Լենինն ընդգծում է, թե բոլշևիկներին իզուր չէ, որ կոչել են կարծրաքարեր, նրանք հաղթահարել են բոլոր դժվարությունները, անհաջողությունների ժամանակ չկորցնելով իրենց գլուխը, գնում են դեպի հաղթանակ։

«Պարտության պահին, — հիշում է Կրուպսկայան Լենինի մասին, — նա մտածում էր պրոլետարիատի մեծագույն հաղթությունների մասին։ Երեկոները, երբ մենք ման էինք գալիս Ժնևի լճի ափին, նա խոսում էր այդ մասին»։ Իզուր չէ, որ Կրուպսկայան այսքան հաճույքով է խոսում Ժնևի լճի ափին զբոսնելու բարերար ազդեցության մասին։ Զբոսնելով նրա ափին, մենք ևս զգում էինք այդ գեղեցիկ լճի հիասքանչ ազդեցությունը մարդու տրամադրության վրա։

Մարտի 18-ին Ժնևում ինտերնացիոնալ միտինգում, որը նվիրված էր Կարլ Մարքսի մահվան 25-ամյակին, 1848 թ. հեղափոխության 60-ամյակին և Փարիզի կոմունայի օրվան, Լենինը ՌՍԴԲՊ-ի անունից հանդես է գալիս փայլուն ճառով։ Գարնանն ու ամռանը Լենինը բազմաթիվ ելույթներ է ունենում Ժնևում, Բեռնում, Լոզանում ռուսական հեղափոխության և նրա հեռանկարների մասին։ Ազատ ժամանակ նա զբոսանքի էր գնում Ժնևի շրջակայքը և այլ վայրեր։ Ապրիլին նա գնում է Իտալիա՝ Կապրի կղզին, որտեղ երկար զրույցներ է ունենում Մաքսիմ Գորկու հետ։ Օգոստոսին քրոջը՝ Մարիա Ուլյանովային գրած նամակում Լենինը հայտնում էր Ժնևի մոտակա սարերում իր զբոսանքների մասին և հեռագրում քրոջն ու մորը՝ աշնանը գալ Ժնև հանգստանալու։ Ուղարկելով նրանց այն տեղերի լուսանկարը, որտեղից նա նոր էր վերադարձել, նամակում Լենինը ավելացնում է. «Վեռլեգլիզը հեռու չէ Դիաբլերից։ Մենք քեզ հետ միասին այնտեղ չենք եղել, Ժնևից երկուսուկես ժամվա ճանապարհ է երկաթուղով և մոտ չորս ժամվա ճանապարհ ոտքով»։

Սեպտեմբերին Լենինը տեղափոխվում է այլ բնակարան՝ Պլենպալե բանվորական թաղամասի Մարեշն փողոցի № 61 տունը, որը նա վարձել էր ամսական 25 ֆրանկով։ Երկու սենյականոց այդ համեստ բնակարանում Լենինը ապրում է երկու երկաթյա մահճակալ, սեղան, երեք աթոռակ, իսկ պատերին կախում խոհանոցային ամանեղեն։ Երբ մենակ էր մնում, ճաշում էր Կարուժ փողոցի բոլշևիկյան ճաշարանում՝ օրական 80 սանտիմով։ Չնայած այսպիսի դժվար պայմաններին, Լենինը մի շարք փայլուն աշխատություններ է գրում, որոնց թվում «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» փիլիսոփայական երկը։

Ռեակցիայի տարիներին Ժնևում փոխվել էին կյանքի պայմանները։ Շվեյցարական իշխանությունները ամեն կերպ սկսել էին հալածել ռուս հեղափոխականներին, տնատերերը հրաժարվում էին նրանց վարձով բնակարան տալ։

1908 թ. վերջին «Պրոլետարի» թերթի հրատարակությունը փոխադրվում է Փարիզ, ուր և մեկնում են Լենինն ու Կրուպսկայան։

Հետագա տարիներին, մինչև Ռուսաստան վերադառնալը, Վ. Ի. Լենինը բազմիցս այցելում է Շվեյցարիա, մի քանի տարի բնակվում է Բեռնում և Ցյուրիխում։ Նա հաճախակի լինում է նաև Ժնևում՝ ռեֆերատներ, զեկուցումներ կարդում, հանդիպումներ ունենում ռևոլյուցիոն գործիչների հետ։

Վ. Ի. Լենինի հեղափոխական-կուսակցական վիթխարի գործունեությունը Ժնևում, հարկադրական էմիգրացիայի տարիներին, անխզելիորեն կապված է մեր կուսակցության ու երկրի պատմության հետ և նրա բազմակողմանի ուսումնասիրությունը քաղաքական-դաստիարակչական մեծ նշանակություն ունի։

Г. Б. Гарибджанян

В. И. ЛЕНИН В ЖЕНЕВЕ

Резюме

В статье, написанной на основании архивных материалов и литературы о деятельности В. И. Ленина в эмиграции, а также личных впечатлений при посещении ленинских мест в Швейцарии в ноябре 1964 г., автор освещает некоторые стороны революционной деятельности В. И. Ленина в условиях эмиграции.

С 1895 по 1917 г. с некоторыми перерывами Ленин провел в Женеве около четырех лет. Автор показывает, что, находясь вдалеке от родины, В. И. Ленин в этот период проводил огромную политическую и организаторскую работу, руководил деятельностью печатных органов РСДРП, писал книги, статьи, брошюры, читал доклады в эмигрантских партийных кружках.

В Женеве В. И. Ленин часто имел встречи с видными революционерами-армянами С. Шаумяном, Б. Кнунянцем, И. Лалаянцем, А. Зурабяном и другими. Автор приводит примеры, свидетельствующие о той великой заботе, которую проявлял В. И. Ленин о развитии армянской революционной печати и революционных кружков армянских эмигрантов в Швейцарии. При поддержке В. И. Ленина в Женеве была основана первая армянская студенческая социал-демократическая организация, которая стала выполнять важную работу по сплочению вокруг РСДРП армянской революционной молодежи.

В. И. Ленин руководил и направлял борьбу армянских марксистов по разоблачению идеологии и антинародной деятельности дашнаков и других националистических партий.

В апреле 1905 года по поручению В. И. Ленина С. Шаумян направляется в Берн для участия в работе Конгресса «Армянского студенческого Союза в Европе».

Этот «Союз» находился под влиянием дашнаков. Но армянским большевикам удается под руководством С. Шаумяна привлечь значительную часть студенчества на сторону большевиков.

В конце статьи автор подчеркивает, что вся огромная революционно-партийная работа В. И. Ленина в годы вынужденной эмиграции была неразрывно связана с историей нашей партии. Глубокое и всестороннее изучение деятельности В. И. Ленина в этот период имеет огромное политическое и воспитательное значение.